

ու գործ է ածում անհաջող և անհասկանալի նոր բառեր ու բառակապակցություններ (օրինակ՝ «...որոնք արտահայտում են նպատակամիտվող ակտիվ գործողության գաղափար»—64, «հիմնական ձևությի մասնիկավորվածությունը»—69, «ունեն բեղմնավորության տարրեր բնույթ»—70, «սածանցը շատ արտադրողական չի եղել»

—239, «ցուցաբերելով երկրնայրաբյուն»—604 և այլն)։

Ամփոփենք։ Ա. Արբահամյանի «Բայք ժամանակակից հայերենում» աշխատությունը գիտական լուրջ և արժեքավոր ուսումնասիրություն է. այն նշանակալից ներդրում է հայագիտության մեջ։

Ա. ԱՐԲԱԿՅԱՆ

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Շատախի լարրառը, Երևանի Պետական համալսարանի Հրատարակչություն, Երևան, 1962, 217 էջ, գինը 87 կոպ.:

Գրական լեզվի աննախընթաց զարգացման ու տարածման և ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացման հետ միաժամանակ խարիչվում են տեղական բարբառների հիմքերը, և նրանք աստիճանաբար մահանում են։ Հայերենի մի շարք բարբառներ արդեն պատմության ասպարեզից դուրս են եկել և բնդմիշտ անհայտ կմնան գիտությունը։ Ահա թե ինչու բարբառների հետազոտության բնագավառում կատարվող ամեն մի աշխատանք պետք է արժանանա խրախուսանքի։ Այս տեսակետից շնորհակալ գործ է կատարել Մ. Մուրադյանը՝ ուսումնասիրելով մեր մահացող բարբառներից մեկը՝ Շատախի բարբառը։ 1915 թ. հայկական կոտորածների ժամանակ մի կերպ մազապուրծ լինելով թուրքական յաթաղանից և Արևելքի անապատներում ու Իրաքի տափաստաններում երկար դեգերելուց հետո, շատախցիների հիմնական մասը 1921 թ. ներգաղթում է Արևմտյան Հայաստան և բնակություն հաստատում Արտաշատի, էջմիածնի, Աշտարակի, Վեդու շրջաններում և այլուր։ Գտնվելով այլ բարբառների միջավայրում՝ Շատախի բարբառը աստիճանաբար զիջում է իր դիրքերը և նրանով այժմ խոսում են միայն տարեց շատախցիները։

Նպատակ ունենալով բնթերցողին ծանոթացնել հայ ժողովրդի այդ հատվածի անցյալին, և ապա անցնում բարբառի բնությունը։

Պրոֆ. Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագիտության» մեջ (1911) Շատախի խոսվածքը դասում է Վանի ենթաբարբառների շարքը, իսկ «Բնություն Վանի բարբառի» (1952) աշխատության մեջ այդ խոսվածքի սասին ոչինչ չի ասում։ Շատախի և Վանի խոսվածքների մանրամասն համեմատական բնությունը գրախոսվող աշխատության հեղինակին բերում է այն եզրակացության, որ Շատախի բարբառը, որոշ բնդհանրություններ ունենալով Վանի բարբառի հետ, վերջինիցս էականորեն տարբերվում է լեզվական, հատկապես ձևաբանական, բազմաթիվ առանձնահատկություններով, որոնք և հիմք են տալիս Շատախի բարբառը համարել ինքնուրույն և ոչ թե Վանի բարբառի ենթաբարբառ։ Այդ եզրակացության հետ պետք է համաձայնել։ Հոգնակի թվի կազմության, գոյականների ու դերանունների հոլովման, բայի խոնարհման և հնչյունական փոփոխությունների մեջ Շատախի և Վանի բարբառները մեծ տարբերություններ ունեն, գրաբարի նկատմամբ հաճախ անկախ գիրք են գրավում՝ անմիջական շիման կետեր չունենալով միմյանց հետ։ Հեղինակը գտնում է, որ Շատախի բարբառը ավելի մոտ է Մոկաց բարբառին, բայց որովհետև վերջինս դեռևս ուսումնասիրված չէ, վերջնական վճիռ չի տալիս նրանց՝ միմյանց նկատմամբ ունեցած դիրքի մասին (ենթաբարբառային կամ անկախ)։

Բարբառի ուսումնասիրության համար նյութեր հավաքելիս հեղինակը, ինչպես նշում է ինքը, հաճախ է եղել շատախցիների շրջանում, սովորել է բարբառը։ Իսկ սա նշանակում է, որ նրա տված տեղեկությունները բարբառի մասին վստահելի են։ Ժողովրդի կենդանի խոսքը ուսումնասիրելուն զուգընթաց, նա ծանոթացել է նաև բանահյուսական գրավոր նյութերին՝ «Սասնա ծռեր» ժողովածուի Շատախի, Մոկոի սլատումներին, Ծ. Լալայանի «Վասպուրականի բանահյուսությունը» և այլ աղբյուրներին։

Իր թեմային վերաբերող բնդհանուր հարցերը լուծելուց հետո՝ հեղինակն անցնում է լեզվական կոնկրետ նյութի բնությունը «Հնչյունաբանություն» բաժնում (էջ 28—66) համառոտ գաղափար տալով բարբառի արտասանական առանձնահատկությունների մասին, նա լեզվական հարուստ նյութի հիման վրա ներ-

Իր աշխատության սկզբում Մ. Մուրադյանը պատմական որոշ տեղեկություններ է հաղորդում Շատախի և նրա հայության մասին՝

կայացնում է հին հայերենի (գրաբարի) ձայնավորների, երկրաբառների և բաղաձայնների կրած փոփոխությունները բարբառում: Քննարկվում են նաև հնչյունների սղման, կորստի, հավելման, դրափոխության և շեշտի հետ կապված հնչյունափոխության դեպքերը:

«Բառագիտություն» բաժինը (էջ 67—84) նվիրված է բարբառի բառապաշարի ուսումնասիրությանը: Հայերեն ամեն մի բարբառի բառապաշարը իր մեջ ունի 3 հիմնական շերտ՝ գրաբարից ավանդված բառեր, բարբառային բառեր և բարբառի կատարած փոխառություններ: Գրքի հեղինակն առանձին-առանձին քննում է բարբառի բառապաշարի այդ շերտերը, նշում գրաբարյան բառերի իմաստափոխության պատճառները, վերլուծում բարբառային բառակազմության օրինաչափությունները և դրանց մասին անում ուշագրավ դիտողություններ:

Ամենաընդարձակը գրքի «Ձևաբանություն» բաժինն է (էջ 85—162), որը նվիրված է բարբառի խոսքի մասերի քննությանը: Այս բաժնում պատմական մոտեցմամբ քննվում է բարբառի ձևաբանական համակարգը, իբրև ելակետ ունենալով գրաբարի սիստեմը: Հարուստ լեզվական նյութի հիման վրա մանրամասնորեն վերլուծվում են բարբառի գոյականների հոգնակի թվի կազմությունը, հոլովներն ու հոլովումները, ածականների համեմատության աստիճանների կազմությունը, թվականները, բայի խոնարհման առանձնահատկությունները և այլն, որոնք ամբողջական գաղափար են տալիս բարբառի ձևաբանական համակարգի և գրաբարի համեմատությամբ նրա կրած փոփոխությունների մասին:

Արժեքավոր են գրքում բերվող բարբառային տեքստերը (էջ 163—190), որոնց մի մասը վերցված է գրական աղբյուրներից, իսկ մի մասն առաջին անգամ գրի է առնվել հեղինակի կողմից: Տեքստերի մեջ տեղ են գտել Շատախի ժողովրդական երգեր ու խաղիկներ, առածներ ու ասացվածքներ և ժողովրդական բանահյուսության այլ նմուշներ: Դրանց արժեքը ոչ միայն այն է, որ ամբողջական գաղափար են տալիս Շատախի բարբառի լեզվական առանձնահատկությունների մասին, այլև այն, որ դրանց միջոցով ծանոթանում ենք մեր ժողովրդի այդ հատվածի բանահյուսությանը, որը հայ ժողովրդի դարավոր մշակույթի պատմության մեջ ունի իր արժանի տեղը:

Գրքի վերջում, իբրև հավելված, տրված են բարբառում գործածվող հին հայերենից ավանդված բառերի բառացանկ (էջ 191—207) և բարբառային առանձնահատուկ բառերի բա-

ռարան (էջ 208—217): Գիրքն ունի նաև համառոտ ամփոփում՝ ուսուցիչներին և անգլիկներին:

Հավ տիրապետելով բարբառին և միևնույն ժամանակ ունենալով լեզվաբանական համապատասխան պատրաստություն ու հաշվի առնելով բարբառագիտական նախորդ ուսումնասիրությունների փորձը, հեղինակը հաջողությամբ է լուծել իր առաջ դրված խնդիրը:

Այս բոլորն, իհարկե, չեն նշանակում, թե Ս. Մուրադյանի գիրքը գերծ է թերություններից և առանձին վրիպումներից: Նշենք դրանցից մի քանիսը: Ինչպես ասացինք, գրքում տրված է Շատախի բարբառային բառերի բառարան, որ պարունակում է մոտ 700 բառ: Բարբառային (պրոֆ. Աճառյանի տերմինով՝ գավառական) են կոչվում այն բառերը, որոնք գրաբարից ավանդված չեն, բայց և միաժամանակ փոխառություն չեն մեզ ծանոթ այս կամ այն լեզվից: Հեղինակի բացատրությունից մենք իմանում ենք, որ բարբառային բառարանում մտցված են նաև «փոխառյալ այն բառերը, որոնք կազմում են բարբառի բառապաշարի անհրաժեշտ տարրը» (էջ 208): Մեր կարծիքով՝ փոխառյալ բառերը չպետք է տեղ գտնեն գավառական բառարանում: Հիշենք, որ այդ սկզբունքով են կազմված Աճառյանի «Գավառական բառարանը» և Ամատունու «Հայոց բառ ու բանը»: Իսկ եթե նրանք տիրվում են գավառական բառարաններում, ապա անպայման պետք է հատուկ նշում ունենան, որպեսզի տարբերվեն բուն հայերեն բառերից: Բայց հեղինակը չի տարբերակել այդ բառերը, ուստի և մենք չգիտենք, թե նրա բերած բառերից որոնք են բուն հայկական և որոնք՝ փոխառություններ:

Աշխատության 123—125 էջերում հեղինակը գրում է, որ ներգործական սեռի բայերից ուն և ած վերջավորություններով կազմված հարակատար դերբայները միայն կրավորական սեռի իմաստ կարող են արտահայտել: Դա, իհարկե, ճիշտ չէ: Հարակատար դերբայը կարող է արտահայտել նաև ներգործական սեռի իմաստ, որ երևում է հենց իր՝ հեղինակի բերած տեքստերից, ինչպես՝ շան ծիծ կերած (էջ 179), պրրտուճրմ խաց շրկերած (էջ 181) «մի քրդուճ հաց շկերած» և այլն: Այս կապակցություններում հարակատար դերբայները ներգործական սեռի իմաստ են արտահայտում:

133-րդ էջում կարգում ենք, որ, իբր թե, բոլոր բայերի բուն հրամայականը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից: Բայց հեղինակի բերած օրինակներից պարզվում է, որ այս կանոնը ճիշտ է միայն ու խոնարհման պարզ բայերի և ի խոնարհման ածանցավոր բայերի համար: Ի խոնարհման պարզ բայերի բուն

հրամայականը կազմվում է ներկայի հիմքից, «օրինակ՝ կարցկիմ-ներկայի հիմք՝ արցկ-հրամայակցի: Սխալ է նաև այն, թե արգելական հրամայականը կազմվում է մի, մը, մ արգելական մասնիկով և ըզձական դերբայով: Ծիշտ է, հրամայականի արգելականը և ըզձական դերբայը ձևով նույնանում են, բայց դրանք և իմաստով, և ծագումնաբանորեն տարբեր են:

Մ. Մուրադյանը կարծում է, որ «Քեզ պիտի ուղարկի քաղաք սովորելու», «Գնացել է մաս գալու», «Փայտը պետք է տամ տղայիս ջարդելու» կապակցությունների մեջ նպատակի պա-

րագաներն ունեն սևուական հոլոված (էջ 123), այնինչ բացահայտ է, որ ընդգծված բառերը դրված են տրական հոլովով:

Բավարարվենք այսքանով: Մ. Մուրադյանի աշխատությունը բարբառագիտական արժեքովոր ուսումնասիրություն է և օգտակար կարող է լինել հայ բարբառագիտությանը, հայոց լեզվի պատմությանը, ժողովրդական բանահյուսությանը զրաղվողների ու հետաքրքրվողների համար:

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԻՔԵՆ ԶԱՐՅԱՆ, Աղամյան, Արվեստը, Հայկական ՍՍՌ-ԳԱ Հրատարակչություն, 1960, 536 էջ, գինը 2 ռ. 04 կ.:

ՌՈՒԻՔԵՆ ԶԱՐՅԱՆ, Աղամյան, Կյանքը, Հայպետհրատ, 1961, 416 էջ, գինը 1 ռ. 18 կ.:

Պետրոս Աղամյանի մասին շատ է գրվել պարբերական մամուլում (հայ, ռուս, ինչպես և վրացական), գրվել են նաև փոքրածավալ գրքեր: Սովետահայ թատերագիտությունը զգալի աշխատանք է կատարել մեծ դերասանի մասին գանազան պարբերականներում, հուշերում և այլուր ցրված նյութերը ի մի բերելու ուղղությամբ, սակայն, այսուհանդերձ, Աղամյանի կյանքի պատմությունը, արվեստի հանդամանալի վերլուծությունը մնացել էր չգրված: Անհրաժեշտ էր շանասիրությամբ ու սիրով շարունակել պրպտումները, ի մի բերել պարբերական մամուլում ցրված նյութերը, արխիվային փաստաթղթերը, հիշողությունները, Աղամյանի գրած և ստացած նամակները: Սովետահայ թատերագիտության մեջ գոյություն ունեցող այդ բացը լրացնում է Ռ. Զարյանի «Աղամյան» աշխատությունը: Հեղինակի նպատակն է եզել «կյանքի կոչել իր ուսումնասիրած նյութը, որքան հնարավոր է հաճախ ձայն տալ Աղամյանին ու նրա ժամանակակիցներին, խոսեցնել նրանց, իրեն վերապահելով ասորինների ընթացքում կուտակված ու ցրված նյութը հավաքելու, ի մի բերելու և այդ ամենը համապատասխան մեթոդորտի մեջ գնելու պարտականությունը»: Հեղինակը հասել է իր նպատակին, նրան հաջողվել է կերտել Աղամյան-մարդու, Աղամյան-քաղաքացու, Աղամյան-դերասանի կերպարը:

Աշխատության առաջին գիրքը նվիրված է Աղամյանի կյանքի պատմությանը: Խոսում

գյուտների («Կյանքի շեմին», «Նոր հորիզոններ», «Մեծ հանապարհներին», «Կերպին հանապարհ») և ենթագյուտների («Գծառություն Զմշկյանի հետ», «Փառքի առումը», «Ռուսաստանի սրտում», «Մենամարտ բեմի և օթյակի միջև», «Ես հայ արտիստ Աղամյանն եմ») տակ, Ռ. Զարյանը տալիս է այն հանապարհը, որով անցել է հանճարեղ դերասանը, նրան շխարհում իր միջավայրից, հասարակական-քաղաքական իրադարձությունների ֆոնի վրա բնութագրում է Աղամյանի արվեստի, կերտած կերպարների նշանակությունը՝ միաժամանակ այդ ամենը շանչատելով դերասանի անձնական կյանքի ուշագրավ դեպքերից: Հետաքրքրական է, օրինակ, Գ. Զմշկյանի և Պ. Աղամյանի փոխհարաբերության հարցը, որ քննարկված է մենագրության մեջ: Ինչպես մեծ դերասանի կյանքի ամեն մի հատված, այնպես էլ Զմշկյանի և Աղամյանի գծառության պատմությունը Զարյանը դիտում է հասարակական տեսանկյունից, երկու դերասանների անձնական ապրումները տալիս է միջավայրի ֆոնի վրա և այդ իսկ պատճառով առաջին հայացքից կարծես թե մասնակի հարց շոշափող «Գծառություն Զմշկյանի հետ» հատվածը դարձել է այն միջավայրի ճիշտ նկարագրությունը, որի մեջ ստեղծագործել են Աղամյանը և Զմշկյանը:

Գրքի շատ հատվածներ նորություն են բերեցողների համար, քանի որ աղամյանագետներից և ոչ մեկը չի անդրադարձել կամ թեթևակի է անդրադարձել մի շարք խնդիրների: Սակայն դրանք հարցեր են, որոնք լույս են գցում Աղամյանի արվեստի բնորոշ կողմերի,

1 Ռ. Զարյան, Աղամյան. Կյանքը, էջ 8: